



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.14

---

4-64

17 FEB 2010

338.14  
4-64

334.6

4-30

СССР  
Институт  
Исторической  
Лингвистики  
и этнографии  
им. В. В. Рудакова

# ԿՈՆԽՈԶԱՅԻՆ ԲՐԻԳԱԴ

Институт  
Исторической  
Лингвистики  
им. В. В. Рудакова  
СССР

Վ Ր Ա Ս Ս Ա Ն Ի Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ԹԻՖԼԻՍ

1932 թ.

338.14

4-64

Թարգմանիչ — Ա. Գալքյան  
Սրբագրիչ — Գ. Քաբառյան  
Թողարկիչ — Ս. Լորդֆիպանիձե

ԿՈՒՍԱԿԵՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐԱՅՈՒԹՅԱՆ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՄՐԱ-  
ՊԵՂՄԱՆ ՀՆՐԹԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵՍԻՆ

(Համկոմկուսի Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի  
վորոշումը)

Կուսակցութեան Կենտկոմը մատնանշում է բոլոր  
կուսակցական կազմակերպութեաններին, թե կոլխոզ-  
ների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման  
խնդիրը հանդիսանում է ներկայումս, ամենից առաջ,  
կոլխոզների արտելային ձևի զարգացման ու ամրա-  
պնդման խնդիրը: Ընդ սմին Կենտկոմը յեղնում է նրա-  
նից, վեր կոլխոզների արտելային ձևից դեպի կո-  
մունա փոխանցումն արհեստականորեն արագացնելու  
փորձերը կոլխոզների զարգացման այժմյան ժամա-  
նակաշրջանում հանդիսանում են լուրջ վտանգ: Դեռ  
բավականաչափ չծավալված և չամրապնդված գյու-  
ղատնտեսական արտելի ձևի վրայից քոչելու այդ  
վտանգի դեմ Կենտկոմը նախազգուշացնում է բոլոր  
կուսակցական կազմակերպութեաններին:

Գարնանացանի կամ պտեխային պատրաստվելու,  
բերքը բարձրացնելու ողտին պայքարելու կապակցու-  
թյամբ Կենտկոմը առանձնապես ընդգծում է հետե-

Տպ. Ա. Չ. Մյանսիկյանի անվ. հրատ. ճշարյա Վոստոկա-ի

Պատկեր 1074.

Գլավկիտ 850.

Քանակ 1000.

վյալ հերթական խնդիրները՝ կոլխոզները կազմակերպչական-անտեսական ամբողջական բնադախտում նրանց արտելային ձևում, վոր ներկա չըջանում տիրապետող և հանդիսանում:

1. Աշխատանքի կազմակերպության կարևորագույն ողակ կոլխոզներում պետք է գտնա բրիգադը: Լավագույն դյուրատեսական արտելները փորձառության հետ համապատասխան կենտկոմը նպատակահարմար և համարում կոլխոզային բրիգադներ կազմակերպելը կոլխոզնիկները մշտական կազմով այն պես, վորպեսզի իրրե կանոն, այդպիսի բրիգադները կատարեն բոլոր հիմնական դյուրատեսական աշխատանքներն ամբողջ տարվա ընթացքում վորոչ հողատեսքում: Այդ բրիգադներին կոլխոզները հատկացնում են նրանց աշխատանքի ժամանակ անհրաժեշտ գործիքներ, ինվենտար ու ըծկան անասուններ, վորոնց վիճակի համար ամբողջովին պատասխանատու չե բրիգադը: Կոլխոզնիկների աշխատորի դրնահատումը պետք է բարձրանա կամ իջնի կախված բրիգադի աշխատանքի արդությունից: Այդպիսի բրիգադների ստեղծումը, սակայն, չի նշանակում, թե չի կարելի ամբացնել բրիգադներին հողամասեր (համաձայն տեղական պայմաններին, կոլխոզի չափին և նրա կազմակերպվածությանը) վոր թե ամբողջ գյուղատեսակական սեղանին, այլ դյուրատեսական աշխատանքների ստանձին ժամանակաշրջաններում

(հերկ, հավաք): Բրիգադիքների գտնումը, նրանց կազմի հասունության վերացումը, խակական ոգնություն բրիգադիքներին՝ նրանց տնտեսական-քաղաքական վորակավորման բարձրացման դործում, — այդ բոլորը պիտի դառնա կուսակցական կազմակերպությունների ամենագլխավոր խնդիրը:

2. Լայն տարածումն պիտի ստանա արդեն անցյալ տարի լավագույն կոլխոզներում բրիգադիքների աշխատանքը վճարելու համար գործարդված պրակտիկան, համաձայն բրիգադի աշխատանքի վերջնական հետևանքների:

Բրիգադիքի պատասխանատվության բարձրացումը, աշխատանքը կոլխոզում կազմակերպելու դործում նրան մի շարք ֆունկցիաներ տալը պիտի կատարվեն կրճատելով կոլխոզի ընդհանուր-վարչական ծախսերը, վորոնք մի շարք դեպքերում անթույլատրելի կերպով ուռցվել են:

3. Սղելչինան մտցնելու, հաշվառքը բարելավելու, յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքը՝ համաձայն նրա կատարած աշխատանքի քանակի և վորակի՝ աշխատատերերիցով գնահատելու մասին Խորհուրդների Երդ համարումարի հանած վորոշումների իրականացումը շարունակում է մնալ վորպես կարեւորագույն խնդիր:

Միևնույն ժամանակ կենտկոմը նախագուշացնում է սղելչինայի ձեերի չափազանց բարդացու-

58316-67



մից, պրոգրեսիվ սղեղչչինա մտցնելուց, սղեղչչինա-  
յի անհատական ձևերով տարբերուց այնտեղ, ուր դա  
չի պահանջվում արտադրանքի պայմանների շնոր-  
հիվ (որինակ՝ հերկի և կալսելու ժամանակ), կոլ-  
խոզնիկի աշխատանքի վարձատրությունը դրամական  
աշխատավարձի փոխադրելու դեմ, կոլխոզների  
վարչությունների աշխատանքը կուսակցական և խոր-  
հրդային կազմակերպությունների կողմից մերկ  
վարչականությամբ փոխարինելու դեմ, գյուղատնտե-  
սական արտելի կանոնադրությամբ զանազան ֆոն-  
դերի համար հատկացումներ անելու նպատակով ըն-  
դունված չափերը բարձրացնելու դեմ:

4. Լախ տարածում պետք է ստանա՝ լավագույն  
անասնաբուժական կոլխոզային ֆերմաների փորձով  
ստուգված՝ այն աշխատանքը, վոր կատարում են  
բրիգադի մեջ մտած կոլխոզնիկները մեծագույն չա-  
փով կենդանիների խնամքի վերաբերմամբ այնպես,  
վորպեսզի անասնաբուժական բրիգադը և նրա մեջ  
մտնող կոլխոզնիկները վարձատրվեն իրենց աշխա-  
տանքի հետևանքների համեմատ (տված կաթի քա-  
նակը, մատող անասունների կշռի անք, անասունների  
տճեցման չափը, և այլն):

5. Կենտկոմը կուսակցական և կոլխոզային կազ-  
մակերպությունների կարևորագույն քաղաքական խըն  
դիրն է համարում կոլխոզային ակտիվի — հարվածա-  
յին—կոլխոզնիկների, սոցիալիստական մրցակցության

մասնակցողների, բրիգադիրների առաջ քաշման ու  
դառտիարակության աշխատանքը: Կոլխոզային ակ-  
տիվի վրա պետք է հենվեն տեղական կազմակերպու-  
թյունները կարևորագույն տնտեսական միջոցառում-  
ների իրականացման ժամանակ — սլայքար բերքի  
համար, հացի մթերման սլանի իրագործման համար,  
և այլն, նաև կոլխոզնիկների սոցիալիստական վերա-  
դառտիարակության դործի համար:

6. Կոլխոզների կազմակերպչական—տնտեսական  
ամրապնդման, կոլխոզային ակտիվ ստեղծելու, բեր-  
քատվությունը բարձրացնելու ամբողջ աշխատանքի  
մեջ մեծ է մեքենա—տրակտորային կայանների դերն ու  
պատասխանատվությունը:

Այդ առթիվ կենտկոմն առաջարկում է կուսակցա-  
կան կազմակերպություններին ուժեղացնել ամենորյա  
ողնությունը մեքենատրակտորային կայաններին և  
նրանց ամբողջ տնտեսական աշխատանքի ղեկավարու-  
թյունը:

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (բ) ԿԵՆՏԿՈՄ

## ՀԵՏԵՂՈՒ ԿՈՒԵԿՏԻՎԱՅՄԸՆ ՏԵՄՊԵՐԻ ՏԵՎ ԿՈՒՍՈՉՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Համկոմկուսի Կենտկոմի 1931 թվի ոգոստոսի 2-ի  
վորոշումը)

Համկոմկուսի Կենտկոմը նշում է գյուղատնտե-  
սության կոլեկտիվացման սեմպերի աջող կատա-

բումը և գերակատարումը, վորոնք (տեմպերը) սահմանվել են Համկոմկուսի Կենտկոմի և կուսակցութեան 16-րդ համագումարի վորոշումներով:

Համկոմկուսի Կենտկոմը վորոշում է.

Պարզաբանել, վոր այս կամ այն ուսյունի կամ մարզի կուլեկտիվացման ավարտման չափանիշ հանդիսանում է վոչ թե բոլոր չքավոր-միջակ տնտեսութունների ընդգրկումը հարյուր տոկոսով, այլ դյուղացիական տնտեսութունների վոչ պակաս, քան 67-80 տոկոսի ներդրումը կոլխոզներին մեջ, վոչ պակաս, քան դյուղացիական տնտեսութուններին 65-80 տոկոս ցանքային տարածութունների ընդգրկումով:

Կուլեկտիվացումը հիմնականում ավարտված համարել Հյուսիսային Կովկասում (առանց մի քանի ադգային ուսյունների), վորտեղ արդեն կուլեկտիվացվել է չքավոր-միջակ տնտեսութուններին 85 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութուններին 94 տոկոսի ընդգրկումով, Ներքին Վոլգայում (առանց Կալմիկներին մարզի), վորտեղ արդեն կուլեկտիվացվել է դյուղացիական տնտեսութուններին 82 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութուններին 92 տոկոսի ընդգրկումով, Միջին Վոլգայում (ձախ ափը), վորտեղ արդեն կուլեկտիվացվել է դյուղական տնտեսութուններին 90 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութեան 95 տոկոսի ընդգրկումով, Ուկրայինայում (հարթութուն), վորտեղ արդեն կուլեկտիվաց-

վել է դյուղացիական տնտեսութուններին 85 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութուններին 94 տոկոսի ընդգրկումով, Ուկրայինայում (ձախ ափը), վորտեղ արդեն կուլեկտիվացվել է դյուղացիական տնտեսութուններին 69 տոկոսը՝ դյուղական ցանքային տարածութուններին 80 տոկոսի ընդգրկումով, Դրիմում, վորտեղ արդեն կուլեկտիվացվել է դյուղացիական տնտեսութուններին 83 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութուններին 93 տոկոսի ընդգրկումով, Ուբալում (հացահատիկային ուսյուններ), վորտեղ արդեն կուլեկտիվացվել է դյուղացիական տնտեսութուններին 75 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութուններին 82 տոկոսի ընդգրկումով, Մուղավիայում, վորտեղ արդեն կուլեկտիվացվել է դյուղացիական տնտեսութուններին 65 տոկոսը՝ դյուղացիական ցանքային տարածութուններին 75 տոկոսի ընդգրկումով:

Համկոմկուսի Կենտկոմն առաջարկում է հիշյալ հանրապետութունների և մարզերի կուսակազմակերպութուններին՝ դնել իրենց աշխատանքի կենտրոնում՝ կոլխոզների կազմակերպչական - տնտեսական սմբացումը՝ նրանց զարգացման ներկա արտելային շրջանում, աշխատանքի կազմակերպումը, հաշվառքի գործի կազմակերպումը, սղեղչինայի անցկացումն, աշխատանքի վորակի համար մղվող պայքարը, բարձր ապրանքային կոլխոզային Ֆերմաների կազմակերպումը և կադրերի ստեղծումը:

Ինչ վերաբերում է Խորհրդային Միության հարցահատրիկային մյուս ուսյուններին (Սև-Հողյան շրջանի, Արևմտյան Սիբիրի, Կաղակատանի, Բաչկիրայի, Արև-վելյան Սիբիրի և Հեռավոր Արևելքի հացահատրիկային ուսյունները), ինչպես նաև Միջին Ասիայի, Կարգակատանի ու Մոլդովիկասի բամբակային ուսյուններին և Ուկրայինայի ու Սև-Հողյան Շրջանի ճակնդեղային ուսյուններին, Համկոմկուսի Կենտկոմն առաջարկում է գյուղացիական տնտեսությունները կոլխոզների մեջ ներգրավելու հետագա տեմպերն այդ ուսյուններում կառուցել այն հաշվով, վոր կոլեկտիվացումն ալարտովի հիմնականում 1932 թվին. Համկոմկուսի Կենտկոմն առաջարկում է այդ մարզերի և ուսյունների կուակարմակերպություններին՝ վոչ մի դեպքում թույլ չտալ, վոր գյուղացիներին կոլխոզների մեջ ներգրավելու պայքարը դառնա կոլեկտիվացման փրուն տոկոսների յեակեից ընկնող վատառողջ վաղք: Համկոմկուսի Կենտկոմն առաջարկում է այդ կարմակերպություններին՝ գործիչները ուչադրությունը կենտրոնացնել կոլեկտիվացման բնադավառում յեղած նվաճումները ամրացման վրա և ուժեղ աշխատանք զարդացնել կոլխոզների կարմակերպչական-տրն տեսական ամրացման գործում:

Խորհրդային Միության առանձին ուսյուններում, այդ թվում նաև սպառողական շերտի ուսյուններում, Համկոմկուսի Կենտկոմն առաջարկում է կոլեկտի-

վացման աշխատանքը տանել այն հաշվով, վորպեսզի կոլեկտիվացումը հիմնականում ալարտովի 1932—33 թվին: Համկոմկուսի Կենտկոմն առանձնապես նախադրուչացնում է այդ ուսյունների և մարզերի կարմակերպություններին՝ կոլեկտիվացման փրուն տոկոսների յեակեից ընկնելուց: Համկոմկուսի Կենտկոմն առաջարկում է այդ կարմակերպություններին՝ գործիչները ուչադրությունը կենտրոնացնել կոլխոզների կարմակերպչական-չինարարական աշխատանքի բարելավման և ամենից առաջ կտավհատի և բանջարեղենի կոլխոզների ամրացման խնդրի վրա:

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄ

ԿՈԼԽՈԶՅԻՆ ԲԻԻՎԱԳԸ—ՈՒՅԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՒՈՒՄ

1931 թվի սոգոտոսի 2-ին կուակցության Կենտրոնական Կոմիտեն ընդունեց վորոչում, վորով բոլոր կուակցական կարմակերպությունները պարտավորեցվում են կենտրոնացնել ուչադրությունը կոլխոզների կարմակերպչական-տնտեսական ամրացման վրա: Այդ վորոչումից հետո անցած կես տարվա ընթացքում կոլխոզների մեծ մասը շնորհիվ կուակարմակերպությունների միջոցառումնորի, նշանակալից չափով աճեց և կոլխոզային արտադրությունն ամրացավ, կուակվից կոլխոզային շինարարության նոր փորձը:

Պայքար հացամթերումների պլանն իրացնելու, յեկամուտն ըստ աշխատանքի քանակի ու վորակի բաժանելու համար, պայքար աշնանացանի համարահաս տնտեսաքաղաքական այն հիմնական կամպանիաները,



վորոնց պրոցեսում ստուգվում եր կուսակազմակերպու-  
թյունների հմտությունը կոլխոզների կազմակերպչա-  
կան-տնտեսական ամրապնդումն անցկացնելու գոր-  
ծում:

Յեւ այդ բոլոր աշխատանքներւմ մեծ նախնական-  
ների հետ միասին մի քանի, վոչ բացառիկ, դեպքե-  
րում նկատվում էյին կոլխոզները կազմակերպչորեն-  
տնտեսապես ամրապնդելու վերաբերյալ կ'ի դիրեկտի-  
վի ազաւազումները, կուսակցական այդ լոզունգի սը-  
խալ, ուլորտունիտական ընթանումը:

ԿԿ-մի ողոստոսի յերկուսի վորոշումը հատկապես  
ընդգծում եր, վոր խոսքը վերաբերում է կոլխոզների  
կազմակերպչական-տնտեսական, ամրապնդման՝ նրանց  
զարգացման ներկա, արտելային շրջանում: ԿԿ-մի այդ  
ցուցմունքը մի քանի կուսակազմակերպություններն աչ-  
քաթող արին: Նրանք մոռացան, վոր մեր կուսակցու-  
թյան քաղաքական ստրատեգիայի ամենամեծ արձա-  
զանքներից մեկն այն է, վոր նա դիտել յուրաքանչյուր  
տվյալ բոլորում գտնել շարժման հիմնական ողակը,  
վորին կցվելով նա այնուհետեւ ամբողջ շղթան քաշում  
է դեպի մեկ ընդհանուր նպատակ խոզիբը բուծելու  
համար» (Ստալին):

Նրանք ուշադրություն չդարձրին այն բանի վրա,  
վոր կոլխոզարժման դերակշռող, գերիխոզ ձևը ներ-  
կա ետապում, գյուղատնտեսական արտելն է, վոր կը-  
խոզին արարության այդ ձևը՝ գյուղատնտեսական

արտելը-«դեռ բավարար չաւով չի ծաւալված և չի  
ամրապնդված»:

Այստեղից առաջանում են արտելի վրայով դեպի  
կոմունա թոշելու փորձերը, վորսնք հանդիսանում են  
տիպիկ «ճախիկ» ցատկումներ:

Հայտնի յէ, վոր վերջին ժամանակներս մի շարք  
տեղերում յեղան փորձեր վարչական միջոցով վերջ  
դնելու կոլխոզիկի տնտեսության անհատական մա-  
սին: Ավելի շատ էյին դեպքեր, յերբ արդյունքը բա-  
ժանելու ժամանակ բոլորովին հաշվի չէր առնվում  
կոլխոզիկի տնտեսության անհատական մասը (մեր-  
ժում էյին տալ կերը կոլխոզիկի անհատական ողտա-  
գործման տակ գտնվող անասունների համար, մեր-  
ժում էյին նյութեր տալ խրճիթը նորոգելու համար և  
այլն):

Պակաս չէյին փորձեր, յերբ արդյունքն աշխա-  
տանք որերի համեմատ բաժանելու փոխարեն ուզում  
էյին մտցնել կոլխոզիկների կենտրոնացված մատա-  
կարարումը միասնական պարենավորման Փոնդից:

Պակաս չէյին նաև կոլխոզիկների միջև բաժա-  
նելու Փոնդերի կրճատման փորձերը, և այլն:

Մյուս կողմից առանձին ուսյուններում վճռեցին,  
վոր գյուղատնտեսական արտելն այնքան ամրացաւ,  
իսկ կոլխոզիկն այնքան հիմնավոր կերպով անցաւ  
կոլլեկտիվ աշխատանքի և արտադրության շկոլան,  
այնքան յուրացրեց կոլեկտիվային ունակություննե-

րը, վոր կարելի յե կոլխողում ատանց քաջվելու կիրառել խոշոր արդյունաբերական արտադրության բոլոր միջոցները: Մենք վկա եյինք այն փորձերի, յերբ յուրաքանչյուր առանձին կոլխողնիկը կցվում եր վորոշ հողամասին և համապատասխան ինվենտարին ամբողջ տարով, բոլոր աշխատանքները կոլխողներում անց եյին կացվում անհատական և պրոդերսիվ աղելչչինայի, մտցնվում եր կոլխողում գրամական աշխատավարձը, կոլխողային արտադրության մեջ արմատացվում եյին անտեսահաշվի այնպիսի ձևեր, վորոնք կիրառվում են արդյունաբերության մեջ և այլն: Յեղան, վերջապես, այդ ժամանակաշրջանում փորձեր առանձին ուսումնական կոլխողները ուղղակի սովորող դարձնելու, կոլխողնիկներին դարձնել սովորողի բանվորներ: Ահա սրանք են հիմնական դժեբով կոլխողները կազմակերպչորեն — անտեսապես ամբողջներու մասին կենտկոմի գերեկտիվի ուղղորուցիչական աղավաղումները, վորոնք կոլեկտիվացման փրուն թվերի յետեկց ընկնելու հետ միասին, վոր տեղ-տեղ դեռևս չարունակում ե նկատվել, վկայում են, վոր մի շարք դեպքերում մեր կուսակցական կազմակերպությունները չկարողացան ճիշտ շոշափել այս խնդրը լուծելու հիմնական ողակը:

Համկոմիուսի (բ) կենտկոմի հրապարակած փետրվարի 4-ի վորոշումը «կոլխողների կազմակերպչական — անտեսական ամբողջման հերթական միջոցա-

ռումների մասին» պետք ե վճռական սահման դնի բոլոր այդ աղավաղումներին: Կենտկոմը այդ վորոշման մեջ մի անգամ ևս հիշեցնում ե բոլոր կուսակազմակերպություններին, վոր «ներկայումս կոլխողների կազմակերպչական — անտեսական ամբողջման խնդիրը նախ և առաջ արտելային ձևի կոլխողների զարգացման և ամրացման խնդիրն ե, վոր «զարգացման» այժմյան շրջանում արտելային ձևի կոլխողները կամուսնա դարձնելու արևտական արագացումը լուրջ վրտանգ ե ներկայացնում», վոր «գյուղատնտեսական արտելի ձևը ներկա շրջանում գերիշխող ե և վոր նա «դեռևս բավարար չափով չի ծավալված ու չի ամրացրած»:

Վորտեղ ե դանվում այժմս կոլխողները կազմակերպչորեն — անտեսապես ամբացնելու միջոցառումները չգլխայի հիմնական ողակը: Սյդպիսի ողակ ե ներկայումս նախ և առաջ ԿՈՒԽՈՋԱՅԻՆ ԲՐՈՒԳԱԴԸ: Կարողանալ ուղիղ կազմակերպել բրեզգզ, կարողանալ հավաքել ամուր բրեզգզիչներ, կարողանալ կազմակերպել բրեզգզի աշխատանքը վորոշ հողամասի վրա, մրցակցություն բրեզգզիչներին միջև արտադրության կարևորագույն ցուցանիշներին համար — աստինչումն ե այժմս հիմնական խնդիրը:

Մոտենում ե դարնանացանք: կոլխողները պետք ե այս դարնան լայն Ֆրոնտով ծավալեն համառ կռիվ բերքատուլությունը բարձրացնելու համար: Դա նշա-



կոլխոզներին կազմակերպչական - տնտեսական ամրապնդման աշխատանքների ծանրութեան կենտրոնը ներկայումս պետք է տեղափոխել բրիգադը:

Բրիգադում յուրաքանչյուր կոլխոզնիկը պետք է խմանա իր տեղն արտադրութեան մեջ, իր անելիքը, արտադրանքի նորման ու նրա զնահատումը աշխատորենով: Ամեն մի կոլխոզնիկին բրիգադում վորոշ աշխատանքների ժամանակի ընթացքում պետք է կցված լինի համապատասխան ինվենտար, վորի համար պատասխանատու յե նա: Սոցմրցակցություն կոլխոզնիկներին միջև բրիգադի ներսում, մրցում առանձին բրիգադներին միջև՝ ցանքսի վորակի, բարձր բերքի համար պետք է թափանցի կոլխոզի աշխատանքների ամբողջ կազմակերպումը:

Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների ուժերը պետք է կանոնավոր լինեն կազմակերպված ամեն մի բրիգադին լաջորեն սպասարկելու համար: Բրիգադը պետք է դառնա վոչ միայն արտադրական, այլև ամբողջ մասնայական ֆալաֆական - կրքական աշխատանքների կենտրոն: Բրիգադի մեջ կոլխոզնիկը պետք է տիրապետի աշխատանքի կոլլեկտիվ ունակություններին, մշակի իր մեջ սոցիալիստական վերաբերմունք դեպի հասարակական արտադրական միջոցները, դեպի հասարակական խնդիրները: Բրիգադների ձևավորումից հետո ամբողջ աշխատանքում պետք է դեպի առաջին տեղը քաշվի

բրիգադիրների աջակիսի կադրերը ջոկելու խնդիր, վորոնք կկարողանան հեղինակորեն և ափուր դեկավարել բրիգադին: Բրիգադիլը չպետք է հետամնաց արամադրություններին պոչից քարչ դա, վորոնք կարող են յերևան դալ բրիգադում, բրիգադիլը պետք է լինի կոլլեկտիվ աշխատանքի հմուտ կազմակերպիչ, սոցմրցման և հարվածախության կազմակերպիչ, նա պետք է ունենա տնտեսավարական փորձ և հեղինակություն կոլխոզնիկներին աչքում:

Պետք է սանել, վոր մինչև այժմ համարյա վոչ մի ուշադրություն չեք դարձնվում բրիգադիրներին ընտրության վրա: Ծատ հաճախ բրիգադիրներին կազմում կարելի յե սլատահել բոլորովին պատահական, կոլխոզների համեմայն դեպս վոչ առաջավոր ելեմենտներին: Միքե՞ կարելի յե յուրջ կերպով յոսել կոլխոզների կազմակերպչական - տնտեսական ամրապնդման մասին, յեքե կոլխոզային կադրերի մասին հոգ տանող չկա, յեքե հոգս չի տարվում կոլխոզային արտադրութեան «հրամանատարական կազմի» մասին:

Ամա թե ինչու կենտկոմը, ընդդեկտիվ բրիգադիլերը, կուսակցական և կոլխոզային կազմակերպությունների կարևորագույն քաղաքական խնդիր և համարում կոլխոզային ակտիվի առաջ քաշելու և դաստիարակելու աշխատանքը հարվածային կոլխոզնիկներին, սոցմրցակցության մասնակցողներին, բրիգադիրներին և այլնների միջից: Դա կարևորագույն

Հերթական ողակն և կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամբաստանման գործում և հենց դրա համար պետք է այժմ և յետ սկիզբ դնել կոլխոզային ակտիվի հետ սխառնմատիկ աշխատելուն: «Կոլխոզային ակտիվի վրա պետք է հենվեն տեղական կազմակերպությունները կարևորագույն տնտեսական միջոցառումների իրացման ժամանակ, յերբ մղվում է պայքար բերքի, հացամթերումների պլանի կատարման համար և այլն, ինչպես և կոլխոզիկների սոցիալիստական վերադաստիարակութան գործում»:

Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու այն ահազին նշանակություն վրա, վեր ստանում է ՄՏ-կայանների աշխատանքը կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամբաստանման գործում, մանավանդ այն հեռանկարների տեսակետից, վերոնք այժմ են ՏՎԻ-ը կուսկոնֆերենցիայի վերջումներում:

ՄՏ-կայանների այդ չափազանց պատասխանատու դերը դեռևս բավարար չափով չի յուրացրած և ընթանած: Ահա թե ինչու բոլոր կուսակցական կազմակերպությունները պետք է առանձին ուշադրություն դարձնեն վերաբերվեն Կենտկոմի ղեկավարիին, վորը պահանջում է ուժեղացնել ամենուրյա ոչնուլթյունը մեքենատրակտորային կայաններին և նրանց ամբողջ տնտեսական աշխատանքների ղեկավարությունը:

Պայքար՝ կադրերի, կոլխոզային ակտիվ ստեղծելու, բրիգադի, ՄՏ-կայանների դերն ուժեղացնելու

համար — ահա կազմակերպչական — տնտեսական ամբաստանման ուղին տվյալ ետևսում:

Այդ խնդիրների իրացման համար, ընդդեմ ոչնչության տնտեսական խեղաթյուրումների, կոլխոզների իսկական ամրապնդման համար, կոլխոզային մասսաների սոցիալիստական վերադաստիարակության համար, կոլխոզային յետամնաց խմբակների վրա կուլիային ազդեցությունները վնասակապես հաղթահարելու համար, ընդդեմ ոչնչության սոցիալիզմի, վորը գլխավոր վրտանգ է ներկա ետևսում, և ընդդեմ «ձախիկ» յուրուրումների, յերբորդ բայլչիկյան հաղթական գարուն նախապատրաստելու համար:

## ԿՈԼԽՈԶՆԵՐՆ ԶԻՆԱՐԱՐՈՒԹՅՆ ԳՐՈՒԹՅՆ ՅԵՎ ԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԸՍԻՆ ԸՆԳՐՈՎԿԵՍՈՒՄ:

(Անդրերկրումի 1931 թ. դեկտ. 29-ի վորջումը)

I. Կուսակցություն ղլխավոր գիծն անցկացնելու հիման վրա, յերկու Փրոստով — աջ և «ձախ» ուսորտունիստների դեմ մղվող պայքարում: Անդրերկրի կուսակցական կազմակերպություններն ակնհայտ աջողություններ ունեցան յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում. չբավորմիջակ տնտեսությունների 40 տոկոսից ավելին մտել է կոլխոզները,

խոկ բամբակային ուայոններում կոլեկտիվացվել է տըն տեսությունները 58 տոկոսը և համայնացված է ցանքային տարածությունների նույնպիսի տոկոսը: 1930 թ. վեց ՄՏ կայանների փոխարեն կոլխոզային դաշտերում աշխատում է 30 ՄՏ կայան և գործի յեն դերվում 19 նոր կայաններ: Զգալիորեն աճել է սովխոզների ցանքային տարածությունը, հասնելով 1931 թ. 72.000 հեկտարի:

Տեխնիկական բույսերի ուայոններում բավական բարձրացավ կոլխոզային սեկտորի տեսակարար կըլիոը: Անդրկովկասում կոլխոզային դյուղացիությունը դառնում է հողագործության կենտրոնական դեմքը, հանդես դալով տեխնիկական բույսերի ուայոններում իբրև դյուղատնտեսական առաջադրանքի հիմնական արտադրողը: Սմբանում և ծավալվում է առանաբուծական ապրանքային Փերմաների ցանցը:

II. Համկոմկուսի Անդրյերկկոմը նշում է, վոր 1930 թ. գաղնանը կոլեկտիվացումն անցկացնելու ժամանակ Անդրկովկասի կուսակազմակերպությունների թույլ սոված կուլիտ քաղաքական սխալները չէյին ուղղվել մինչև վերջը: Յերկային հին կուսակցական ղեկավարությունը հաշվի չառավ հին դասերը և դյուղացիական հարցում նորից թույլ սովեց մի շարք լուրջ քաղաքական սխալներ: Անդրյերկկոմի և հանրապետությունների կենտկոմները դիտությամբ և թույլտվությամբ մի շարք յերկրային և հանրապե-

տական մարմիններ (Պետպլան, Հողթողկոմատ, կոլխոզկենտրոն) կոլեկտիվացման կոնտրոլային թվերը հասցնում էյին մինչև ուայոն, դյուղ և կոլխոզ, ուայոններին և կոլխոզներին տալիս էյին ցանքային առաջադրություններ, վորոնք ղերազանցում էյին ներկոլխոզային ընդարձակման փաստական հարավորությունները: Ռայոններից շատերում (Աշտարակ, կարա-Մարյան, կախեթ և այլն) մասսայական աշխատանքը փոխարինվել է կուլիտ վարչականությամբ:

Գյուղատնտեսական արտադրանքի (հաց, միս, խաղող, բոթոթ) մթերումներն անցկացնելիս կուլիտ խոտորումներ են թույլ տրվել Հայաստանում, Ալըրբեջանում և մանավանդ՝ Վրաստանում:

Կուսակցության գծի այդ ծոռումները կոլխոզային շինարարության մեջ Անդրկովկասում ողտագործվում են կուլակային և հակախորհրդային տարրերի կողմից իրենց ազդեցությունը դյուղում աշխուժացնելու համար:

III. Մի շարք կուսակցական կազմակերպությունների կողմից թույլ տրված քաղաքական սխալները և դոյություն ունեցող կոլխոզների կազմակերպական-տնտեսական և քաղաքական ամբացման հարցերի թերազանհատումը խոշոր թերությունների պատճառ են հանդիսանում կոլխոզային շինարարության մեջ Անդրկովկասի հանապետություններում: Յանքային տարածությունները կոլխոզների կողմից ընդ-

զրկվելու տոկոսը ցածր է (կոլխոզներում կազմակերպված չքավոր-միջակ անտեսությունները 40 տոկոսը համայնացրել է բոլոր ցանքային տարածությունները միայն 30 տոկոսը), կոլխոզների զգալի մասը, իսկ մի շարք ուսումնական նրանց դերակշռող մեծամասնությունը (Աղղաշ, Բարդա, Աջարիտան, Հարավ-Ոսեթիա) մինչև այժմ անց չեն կացրել կանոնադրության ձևակերպումը: Ցածր է արտադրության միջոցների համայնացման տոկոսը (ամբողջ Անդրկովկասում համայնացված է աշխատող անասունների 26 տոկոսը և մթերատու անասունների 7 տոկոսը):

Ղուրղուզուլիի և Կասում-Իզմայլովի նման ուսումնական հետ միասին, վորտեղ հիմնականում կոլխոզներն անցել են սղելչչինայի, Անդրկովկասի կոլխոզներից մեծ մասում սղելչչինան անց է կացվել ձեռնարկներին, իսկ առանձին ուսումնական կոլխոզներում սղելչչինա բոլորովին չկա (Աղղաշի ուսում, Նախիջևան):

Կոլխոզների մասայական հետադրումը ցույց է տալիս, վոր Անդրկովկասում հիմնականում կոլխոզների 20—25 տոկոսից վոչ ավելին ունի աշխատանքի, արտադրանքի նորմայի ճիշտ դրված հաշվառքը և աշխատանքի դնահատումը աշխատորերով:

Ցեկամուտներն ըստ կատարված աշխատանքի քանակի ու վորակի բաշխելու միակ ճիշտ սղելչչինայի

խախտումը դեռևս լայն տարածում ունի Անդրկովկասի կոլխոզներում (Գյոկչայի, Աբարանի, Ոսիի և մյուս ուսումնական):

Մի շարք ուսումնական կոլխոզները լցված են դասակարգայնորեն թշնամի տարրերով (Բասարգեչարի, Բեյլատուվարի, Բորչալվի և մյուս մի քանի ուսումնական):

Չեմո-Ֆեդի և Ֆիեմո-Ֆեդի (Սոնախի ուսում) նրման ամուր կոմունաների հետ միասին մի շարք կոմունաներում (Գեջարի-Սեռակի ուսում, Շերի-Մնիի ուսում, Ֆինդարդի — Հարավ-Ոսեթիա, Չայլույի Ղադախի ուսում, «Կարմիր Հովիտ» Դյուզլենդի ուսում, Աղիգրեկովի անվան — Ղարաբաղ) կան խոշորագույն թերություններ-ցածր ապրանքայնություն, յեկամուտների բաշխման, աշխատանքային սղելչչինայի աղավաղում, սղելչչինայի բացակայություն:

Անդրկովկասի սովխոզները և ՄՏ կայանները դեռ ամեն տեղ դյուզլի սոցիալիստական վերակառուցման իսկական հենարկներ չեն դարձել, իսկ սովխոզներից շատերը (Չեմոդիլի, Մեյի, Աղբարայի, Յալունի, Սեծովյան և այլն) նույնիսկ յետ են մնում կոլխոզներից իրենց դարգացման մեջ և կուսակցության ղիբեկտիվների ազավաղումներ ունեն իրենց պրակտիկայում (բարձր ինքնարժեք, անստեղծաբարություն, յեկամուտները թաղցնելու աջ պրակտիկա, անասունների մասսայորեն կոտորվելն անպատասխա-

նառվութեան և անտնտեսավարութեան հետևանքով, յետամացութեան միջերումներէ պլանի կատարման գործում, բանութի հալաքադրումը կազմակերպել և բանվորներէ գոյութեան նյութական — կենցաղային պայմաններէ անհրաժեշտ միջնորդումը ստեղծել չկարողանալը և այլն) :

IV. Նշելով, վոր կուսակցական, խորհրդային և կոլխոզային կազմակերպութեաններն իսկական ձեւով դեռ չեն ձեռնարկել թույլ տրված սխալների ուղղման, Համկոմկուսի Անդրեյերկիմոն առաջարկում և հանրապետութեաններէ Կենտկոմներին, Անդրհոգժողկոմատին, Անդրկոլխոզկենտրոնին, Անդրկոլկապսյան Մատակարարման ժողկոմատին և յերկրային մյուս կազմակերպութեաններին՝ մնական բեկում ապահովել Համկոմկուսի Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի ղիբեկտիվի կատարման գործում — «Իսկույն կոնկրետ ղեկավարութեան կարգով ուղղել կոլխոզային շարժման մեջ մի շարք ուսոններում թույլ տրված սխալները և կենտրոնացնել իրենց ջանքերը նրանց կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացման վրա, շերտավորելով միջոցառումներն ըստ համապատասխան ուսոնների — բարակային, խաղողի, անասնաբուծական, թեյի և այլն» :

Ս. Կոլխոզների պլանավարում և անան բնագավառում

1. Կոլխոզային շարժման կոնտրոլային թվերը մինչև ուսոն, գյուղ և կոլխոզ հասցնելու մինչև այժմ գոյութեան ունեցած պրակտիկան փոխելու համար վստավար կոնտրոլային թվերը կազմել միայն Անդրկոլկապսյան և հանրապետական ծավալով և 1932 թվի զարնան ու աչնան գյուղատնտեսական կամպանիայի պլանը մշակելիս հիմքում դնել այդ թվերը :

2. Հատվածային տեսակետից ուսոնական պլանները կազմել անմիջակալորեն ուսոններում հանրապետական հողժողկոմատներէ և կոլխոզկենտրոնների մտնակցութեամբ, կոլխոզային մասսաների իջնաներգրավումով : Ռաւոնական պլանները կազմել արտադրական հնարավորութեաններէ հետ կոնկրետ կերպով ծանոթանալու հիման վրա և հաշի առնելով ամեն մի առանձին կոլխոզի ներկոլխոզային ընդարձակումը :

3. Տեղական կազմակերպութեանները կոլխոզային շինարարութեանը ցույց տվող կոնկրետ և ճիշտ քաղաքական ղեկավարութեան, գոյութեան ունեկցող կոլխոզների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացման հիման վրա պետք և ապահովեն չքաւոր-միջակ մասսաների հետագա հոսանքը ղեպի կոլխոզները :



Բ. Կոլխոզների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրապնդման բնագավառում

1. Հանրապետությունների կենտրոնները և Անդրկոլխոզկենտրոնը մինչև փետրվարի 20-ը պետք է ավարտեն կոլխոզների արտադրական-ֆինանսական պլանների կազմելը, հաշվի առնելով նրանց մասնագիտացումը:

2. Արտադրական-ֆինանսական պլանների կազմելու աշխատանքը կապել հաշվետու-վերընտրական կամպանիայի հետ:

3. Ապահովել անմիջական կոնկրետ ղեկավարություն ամեն մի առանձին կոլխոզի նկատմամբ պլանների կազմության վերաբերյալ, փոքի համար ռայոնական կազմակերպություններին ողնելու նպատակով մեկ և կես ամսով մոբիլիզացիայի յենթարկել անհրաժեշտ թվով կուսակցական աշխատավորների և ագրո-հաշվային պերսոնալի (Անդրկոլխոզում փոչ պակաս, քան 150 պատասխանատու աշխատավոր, 300 ագրոնոմ, գյուղատնտեսական ԲՈՒՀ-երի վերջին կուրսերի 350 ուսանող և 750 հաշվային աշխատավոր):

4. Ծավալելով աշխատանքն արտադրական-ֆինանսական պլանների կազմության և հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնելու վերաբերյալ, այդ կամպանիայի մեջ անհատական չքավոր-

միջակ մասսաներին լայն չափով ներդրատելու, ինքնաքննադատությունը ծավալելու և կոլխոզային մասսաների ինքնադրժույնությունից հիմանք վրա, պայքարելով ընդ. Ստալինի վեց ցուցմունքների իրացման համար, այդ կարևորագույն տնտեսական-քաղաքական կամպանիան ոգտադրժել կոլխոզի, իբրև գյուղատնտեսություն սոցիալիստական ձևի, իբրև պրոլետարական պետության գյուղում ունեցած նեցուկի դերն ե՛լ ավելի ամրացնելու համար:

5. Կոլխոզների վարչությունների հաշվետվությունների ու վերընտրությունների և արտադրական-ֆինանսական պլանների կազմության կամպանիայի հիմնական բովանդակությունը լինելու յե —

ա) գյուղացու ունեցող կոլխոզների կանոնադրական ձևակերպումը և արտադրության միջոցների համայնացումը կանոնադրության համեմատ.

բ) վարչությունների ամրացումը կոլխոզների լավագույն հարվածայինների հաշվին, ակտիվ կին-կոլխոզնիկների առաջ քաշումը և վարչությունների կազմի զտումը դասակարգայնորեն ոտար տարբերից.

գ) կոլխոզների տնտեսական և ագրո-արտադրամրացումը սղելչինայի փոխադրելու հիման վրա ըստ գյուղատնտեսական աշխատանքների բոլոր տեսակների, անպայման սահմանելով լավագույն կուրսակների, անպայման սահմանելով լավագույն կուրսակների և կոլխոզնիկների փորձով ստուգված արտադրություն նորմաները, բաժանելով աշխատանքա-

յին ուժը և արտադրութեան միջոցներն ըստ բրի-  
գադներին և խմբակներին, աշխատավորներին կցելով  
աշխատամասերին, մեքենաներին և աշխատող  
անասունին, հաշվի առնելով ամեն մի կու-  
խոցնիկի աշխատանքի քանակն ու վորակը և նրա  
ղնահատումն աշխատորեւով, ինչպես նաև անց-  
կացնել անհրաժեշտ ազրո-տրտադրական միջոցառում  
ներ, վորոնք ապահովելու յեն կոլխոզային արտա-  
դրութեան վորակական ցուցանիշներին և ապրանքայ-  
նութեան բարձրացումը (բերքատուութեան, անասուն-  
ների արդյունավետութեան բարձրացումը և այլն) :

դ) ՄՏ կայանի գործողութեան ռաբոտներում ար-  
տադրական պլաններին կազմութեան աշխատանքը  
դնել Տրակտորկոնստրուկտի սխեմային վրա :

ե) հատուկ ուղադրութեան նվիրել մասսայական  
արտադրական և կուլտ-կենցաղային աշխատանքի  
ծախալմանը կոլխոզներում (արտադրական խորհրդ-  
ակցութեաններին աշխատանքը, սոցմրցման և հար-  
վածայնութեան մեթոդներին գործադրումը, այդ աշ-  
խատանքի հաշվառի դրումը, կարմիր անկյուններին  
և խրճիթ-ընթերցարանների աշխատանքի աշխուժա-  
ցումը, աշխատանք պարտուտի վերաբերյալ և ման-  
կամտորներին կազմակերպում), լայն կերպով ներ-  
դրակելով այդ աշխատանքի մեջ կանանց ու կոմ-  
յերիտներին և յերիտասարգներին :

Հանրապետութեաններին կենտրոններին կուլտ-  
պրոպաները մի ամսում լուսծողկոմատներին և կոմյե-  
րիտական, պրոֆմիլեթենական ու կոլխոզա-կոոպե-  
րատիվային կազմակերպութեաններին կուլտ-կենցա-  
ղային սեկտորներին հետ միասին ձեռնարկելու յեն  
կոլխոզներին կուլտուրական շինարարութեան միաս-  
նական պլանին և կուլտ-կենցաղային սպասարկումը  
ծախալելու գործին : Այդ աշխատանքին լայն կերպով  
ներգրավել կոլխոզային սխեմային ռաբոտական և սոտ-  
րին աշխատավորներին :

զ) վերացնել մի շարք կոլխոզներում նկատվող  
արտադրական պլանների կազմութեան պրակտիկան,  
յերբ այդ պլանները չեն կազմում պլանախորման ֆի-  
նանսական կողմի հետ, հատուկ ուղադրութեան  
դարձնելով ֆինանսական կարգապահութեանը բար-  
ձրացնելու, վարկերն արտադրական կարիքներին հա-  
մար ոգտագործելու և ֆինանսական աշխատանքի  
դրման վորակը կոլխոզներում բարելավելու վրա :  
Ֆինծողկոմատի և Պետրանիկի մարմինները ծախա-  
լելու յեն կոլխոզներին հրահանգման աշխատանքը  
ֆինանսական գործը նրանց մեջ դնելու վերաբեր-  
մամբ :

ե) ամբարտել յուրաքանչյուր կոլխոզին աշխատա-  
որերին հանրագումարումը և 1931 թվին յեկամուտ-  
ների վերջնական բաշխումը 1932 թվին հունվարի 15-  
ից վոչ ուշ : Ապահովել պետութեան առաջ կոլխոզնե-

րի ունեցած պարտավորութիւնները կատարուածը, ինչպէս նաև կանոնադրութեամբ նախատեսուած անհրաժեշտ հատկացումների զատուան անբաժան և մյուս Փոնդերի համար, մճռական պայքար մղելով կուշակային ազիտացիայի և այն պրակտիկայի դեմ, յերթ թաղցնում են յեկամուտները, վատնում են կոլխոզային միջոցները, աղավաղում են յեկամուտների բաշխման աշխատանքային սկզբունքը և չեն զատում սերմացույի, ապահովագրութեան ու կերի Փոնդեր:

V. Նշելով կոլխոզային ապրանքային արտոդրանքի սպառումը կազմակերպելու և կոլխոզային առևտրի ծավալման աշխատանքի անբավարար դրութիւնը, ինչպէս նաև մթերումների և արդյունաբերական ապրանքների մատակարարման գործում մթերումների վերաբերյալ յեղած մի շարք խտրանումները, հացի անժամանակ ներմուծումը, մի շարք դեպքերում զատուած մթերքների և արդյունաբերական ապրանքների Փոնդերը չհասնելը մինչև նշանակուած ուսոյնները, արդյունաբեր. ապրանքների ասորախմենոր վորոշելիս դիֆերենցիալ մոտեցման բացակայութիւնը, — Համկոմկուսի Անդրյերկկոմի առաջարկում և Անդրհողժողովմատին, Անդրկովկ. Մատժողովմատին և Անդրկովկոպկենտրոնին՝ տասնորյա ժամկետում զեկուցել Անդր. ժողովմատրհում մթերքների և արդյունաբերական ապրանք-

ների մատակարարման պլանի իրացման և 1932 թ. կոլխոզային առևտրի զարգացման պլանի մասին:

IV. Չնայած գյուղխորհուրդներին, տողերին, չամրացած գյուղատնտեսական արտեղներին կից չբավորութեան ու բատրակութեան խմբակներին ամրացման աշխատանքի և նրանց հետ սխտեմատիկ աշխատանք ծավալելու վերաբերյալ կուսակցութեան կողմից հաճախակի արված ուղղակի և մճռական դիրեկտիվներին, մինչև այժմ մի շարք կուսակցական կազմակերպութիւններ ու պորտուենիստական թերազնահատում և անուշադրութիւն են դրսևորում գյուղում դեպի մեր աշխատանքի այդ կարևորագույն քաղաքական տեղեմասը:

Համկոմկուսի Անդրյերկկոմի առաջարկում և Անդրյերկկոմի ազիտ-մաս բաժնին ու կազմ. բաժնին և հանրապետութիւններին կենտրոններին՝ հունվար ամսին անցկացնել չբավորական խմբակների հետ տարվող աշխատանքի մասսայական հետազոտումն Անդրկովկասի կարևորագույն ուսոյններում: Պարտավորեցնել կուսակցութեան ուսոյնական կոմիտեներին՝ իրենց կողմից անցկացնել այդ աշխատանքի զրութեան ստուգումը և մշակել կոնկրետ միջոցառումներ այդ աշխատանքի աշխուժացման վերաբերյալ, լսելով սխտեմատիկ զեկուցումներ ուսոյնի չբավորական առանձին խմբակների աշխատանքի մասին:

Փետրվարին հանրապետութիւններին կենտրոններ-

բում և Անդրյերկհումում դնել կուսակցութեան մի շարք  
նայոնական կոմիտեաների հաշվետվութեանները չքաղութեան  
և բարարակութեան մեջ կատարված աշխատանքի մասին :

Անդրյերկհումին կից կուսակցական լայն խորհրդակցութեան  
ժամանակ հանրագումարել կուսակցութեան նայոնական  
կոմիտեաների հետազոտութեան և չքաղութեան հետ  
սարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվութեանները  
արդյունքները :

VII. Անդրկովկասի կոլխոզային սիստեմը կադրերով և  
պահովելու վերաբերյալ

1. Հավանութեան տալ Վրաստանի Կոմկուսի Կենտ  
կոմի՝ Վրաստանի կոլխոզային սիստեմը կադրերով  
ամրացնելու հարցի վերաբերյալ 1931 թ. դեկտեմբերի  
յոթի վորոշմանը : Առաջարկել Հայաստանի Կոմկուսի  
Կենտկոմին և Ադրկոմկուսի Կենտկոմին՝ հունվարի  
10-ից վոչ ուշ անցկացնել համապատասխան վորոշում  
Հայաստանում և Ադրբեջանում կոլխոզային սիստեմն  
ամրացնելու վերաբերյալ :

2. Հանրապետ. Կիւները և հանրապետ. Կոլխոզ-  
կենտրոնը 10-նորյա ժամկետում մշակելու յեն 1932  
թվին մասնաշաղկան վորակալորում ունեցող կադրեր  
նախապատրաստելու և վերապատրաստելու հարցը,  
ընդունելով Անդրկովկասի համար մոտավոր չափով  
15.000 հաշվետար, 8000 աշխատանքի կարմակերպող,  
բրիգադիրներ, այդ թվում Ֆերմաների վարիչներ—

40.000, կուլտ-կենցաղային աշխատավորներ— 5000,  
կոլխոզների նախադահներ—8000 և դանազան ուրիշ  
պրոֆեսիաններ—2000, իսկ ընդամենը Անդրկովկասում  
կոլխոզների 78.000 արտադրական ախտիլ :

3. Գյուղատնտեսական տեխնիկոմաների յեղած թը-  
վից կոլխոզային սիստեմին հանձնել այնքան, վորքան  
անհրաժեշտ և կոլխոզային սիստեմի միջին վորակա-  
վորման կադրերի կարիքը բավարարելու համար :

Անդրյերկհումի կադրերի բաժինը հանապետու-  
թյունների Կենտկոմների հետ միատեղ յերկու տաս-  
նորյակի ժամկետում վորոշելու յե հանձնվող գյուղա-  
տնտեսական տեխնիկոմաների անվանացուցակը :

4. Առաջարկել հանրապետութեանների կոմկուս-  
ների Կենտկոմների կուլտպրոպնրին՝ ստուգել գյուղա-  
տնտեսական Բուհ-երի աշխատանքը և ապահովել նը-  
րանց աշխատանքի արմատական չըջարգը դեպի վո-  
րակյալ մասնադեմների լայն կադրերի նախապատրաս-  
տումը համայնացրած սեկտորի, կոլխոզային ամբիոն-  
ներն ամրացնելու և Բուհ-երի բոլոր ճրագրների մեջ  
կոլխոզային առարկաներ մտցնելու համար :

5. Նույն ուղղութեամբ վերակառուցել գյուղատն-  
տեսութեան սոցիալիստական վերակառուցման կազմա-  
կերպվող հանրապետական ինստիտուտների աշխատան-  
քը, դարձնելով կոլխոզային սեկցիաններն այդ ինստի-  
տուտներում դեկավար սեկցիաներ : Այդ ինստիտուտնե-  
րի աշխատանքը յենթարկել կոլխոզային շարժման

գործնական խնդիրներին, կասելով այդ աշխատանքը հանրապետությունների կոլլեկտիվներին և Անդր-կովկասի կոլլեկտիվներին հետ :

VIII. Անդրկովկասի կոլլեկտիվները շարժման առաջ դրված պատասխանատու խնդիրները, առնվազն 50-55 տոկոս չքաղութային տնտեսությունների ընդգրկումը կոլլեկտիվների կողմից և կոլեկտիվացման ավարտումն Անդրկովկասի հիմնական բամբակային ուսյուններում 1932 թվին Համկոմկուսի Կենտկոմի ոգոստոսի յերկուսի վերջումների հիման վրա, — պահանջում են ամբողջական և բարձրացնել դյուրի բոլոր կուսակցական, կոմյունիստական, խորհրդային, կոոպերատիվային և մյուս կազմակերպությունների դասակարգային մարտունակութունը :

Համկոմկուսի Անդրկոմի նշում է, վոր կուսակցության դյուրում կուսակցական աշխատանք տանելու հարցի վերաբերյալ գիրեկտիվներին կատարման գործում մինչև այժմ դեռ չկա անհրաժեշտ բեկում : Բլիճներ դեռ չեն ստեղծվել բոլոր հենակետերում — սովխոզներում և ՄՏ կայաններում : Կոպիտ աջուպորտունիստական սխալները, ինչպես նաև «ձախ» խոտորումները, վորոնք տեղի ունեցան կոլլեկտիվներին շինարարության մեջ, վկայում են այն մասին, վոր կուսակազմակերպությունը դյուրում դեռ չի վերականգնել իր աշխատանքը կուսակցության հիմնական բոլորները ճշտությամբ անցկացնելու, դեպի կոլլեկտիվներ տնտես-

տական-քաղաքական ամրացման խնդիրները շրջադարձ կատարելու համար : Առանձին դյուրական բլիճներն աղտոտված են դասակարգայնորեն թշուով տարբերով և կուլակության ու կուսակցության մեջ նրա ունեցած գործակալության դեմ պայքարելու հիման վրա չեն կարողանում գլխավորել չքաղութային մասսաների քաղաքական և արտաքրական ակտիվությունը դյուրի սոցիալիստական վերակազմության համար մղվող պայքարում :

Կուսակցական մասսայական աշխատանքի ցածր դազափարական-քաղաքական մակարդակը և թուլությունն ունիվերում են դյուրական կուսակցական և կոմյունիստական բլիճների իսկական ամրացման խնդիրը, զնելով այն մեր կուսակազմակերպությունների աշխատանքի առաջին տեղում :

Համկոմկուսի Անդրկոմի նշումն առաջարկում է հանրապետությունների Կենտկոմներին անցկացնել Համկոմկուսի Կենտկոմի դյուրում տարվող կուսաշխատանքի վերաբերյալ ընդունած վորոշումների կատարման մասսայական ստուգումը, լսել կուսակցության մի շարք ուսյունական կոմիտեների հատուկ հաշվետրություններն այդ հարցի առթիվ և վերականգնել տալ կուս. աղարատի ղեկավար ողակները՝ դյուրական կուսակազմակերպությունները և կուսակցության փոխադրիչ փոկերը դյուրում (խորհուրդներ, պրոֆիլություններ, կոմսոմոլ, կոոպերացիա, պատվիրակային

ժողովներ) իսկապես ամբացնելու համար, նրանց նա-  
խադատորաստելու՝ կատարելու համար այն պատասխա  
նատու տնտեսական-քաղաքական խնդիրները, վերոնը  
դրված են զարնան գյուղատնտեսական կամպանիայի  
ժամանակ համատարած կոընկտրվացումն ավարտելու  
և այդ հիման վրա կուլակուլթյունն իբրև դասակարգ  
Անգրիկովհասի հիմնական բամբակային օայտներում  
վերացնելու գործում:

Համկոմկուսի Անգրյեբկոմ



CA  $\frac{11}{276}$

1375

461

907

500

« Ազգային գրադարան



NL0207402

30.609